9853



6098

ԳԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԶԻՆԵՆՔ

ՆՈՐ—ՋՈՒՂԱ

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԱՆ ՎԱՆՈՒՔ

1899

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՇԻՆԵՆՔ

Անցեալ 1898 թուականի Նոյեմբեր ամսի վերջերում իւր շնորհաբեր գալուստից յետոյ երբ տակաւին մի շաբաթ հազիւ անց էր կացած Ս. Առաջնորդը բարեհաճեցաւ նախապէս այցելութիւն տալ Ազգ. ուսումնական հաստատութիւններին և յետոյ անխափար իւր հօտի ամեն դասակարգի բնակարաններին։ Նորա բարձր ուշադրութիւնից չ'վրիպեցաւ ամենից շատ աչքի ընկնող աղջկանց Ուսումնարանի նիւթական շինութիւնը, որ Ս. Կատարինեայ անապատի ծոցումն է և որ բաղկացած է 5-6 գետնայարկ մթին, նեղ և հակառողջական պայմանների ներքոյ սենեակներից, որոնք մէջ 'ի մէջոյ ունին դռնակներ լուսանցոյց պատուհանների և հաղորդակցութեանց ծառայող։ Այս ներքին ձևի հակիրճ տեսութիւնն է, դրսից երեք կողմի որմերը միացած են արտաքին շինութեանց որմերի հետ, միայն արևմտակողմի վերայ 3-4 մետր լայնութիւն և գրեթէ սրա երկու անգամից փոքր աւելի երկայնութիւն ունեցող մի բակ կայ որը ծառայում է աշակերտուհիների դասամիջոցներին և գրօսանքի ժամերին իբրև ճեմելավայր, զբօսատեղի և այլն։ Ամեն կողմից պատեալ պաշարեալ այս Ուսումնարան անուն կրող իսկական բանտը զրկում է թշուառ Սրիորդներին օդը ծծելուց որ ձրի է պարգևում բնութիւնը և կուչ կուչ երկնակամարին դիտելուց որ հոգի է ներշնչում երկնից սիրահարներին, գժբաղդ Սրիորդները բացի իրենց գենիթի վերայ ժպտող մի պատառիկ երկնքից ոչ մի բնութեան վայելքի գիտակից են։

Այն Ուսումնարանը իւր գոյութիւնը պարտի հանգուցեալ բարեյիշատակ Պ. Մանուկ Յորդանանեանի, Նոր Զուղայեցի 'ի Հաւատարիմ ազգասէր Հային, որ սորանից 42 տարի առաջ իւր ժամանակի հասկացողութեան և պահանջից համաձայն ազգասիրաբար բաց է անում

իւր նիւթական միջոցներով։ Առաջներում աշակերտող աղջկանց թիւը 40 ից անց չէ եղել, մինչդեռ այժմ մերձ 250 Օրիորդներ են յաճախում, որոց համար ըստ վերոգրելոյն պակասում են դիւրաւէտ և օգտաբեր պայմաններ։

Այս առիթով առաջին պատեհութեամբ Սրբազան Առաջնորդը միտք յղացաւ վրկել Հայ մատաղ սերնդին սոյն Դպրոց անուն կրող որջանման մթին խցիկներից, որոց մէջ օրական մի քանի ժամերով բանտարկուող խեղճ Օրիորդաց կեանքի իւղն է սպառւում...։ Մինչ Ս. Առաջնորդը լրիվ հոգածութեան առարկայ էր արել իւր սրտում ծագած մի նոր և ամենայն յարմարութիւններով օժտուած դպրոցաշինութեան հարցը և ծրագրին վերայ մտածում ահա վերայ է հասնում Պատ. Հոգաբարձութիւնը ներկայացնելով Նորին Բ. Սրբազնութեան հարցին վերաբերեալ յայտագրեր, որոցմով հարցը կը դառնայ լուրջ խորհրդակցութեան առարկայ, և այլ ևս կ'դադարի թաքուն մնալուց։

Եպա՝ Նոր—Զուղայի Ազգային Երկսեռ Ուսումնարանների մասին մի ընդհանուր տեղեկագիր տրուեց Սրբազան Առաջնորդին Հոգաբարձութեան կողմից անցեալ 1898 ի 4—16 Դեկտեմբերին։

Յետոյ ի միջի այլոց՝ Նոր կառուցանելի օրիորդաց Դպրոցի շինութեան մասին հետեւեալ թելադրութիւնն եղաւ։

«Ոչ պակաս դպրի է նաև օրիորդաց մի նոր Դպրոցի շինութիւնը Զուղայում մէջ, քանի որ արդի Դպրոցն իւր անյարմար շինութիւններով և փոքրիկ ու նեղ դասարաններով մեծ նեղութիւն է պատճառում թէ Ուսուցչաց և թէ աշակերտուհեաց. մանաւանդ ամառուայ տաք եղանակում, որ ժահահոտութիւն է բուրում դասարաններից և երբեմն տարափոխիկ հիւանդութիւններ յառաջացնում մանր աշակերտուհեաց մէջ»։

Իսկ 1899 յ'3—15 Յունվարին հետեւեալ պաշտօնական գրութեամբ Նորից Սրբազան Առաջնորդի ուշադրութիւնը հրաւիրուած է սոյն կարեւոր կէտի վերայ՝ Հոգաբարձութեան կողմից։

.....

Նոր-Զուղա, 3—15 Յունվար 1899։

Նորին Բարձր Սրբազնութեան

Տէր Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեան Բարեխնամ

Առաջնորդ Հայոց Պարսկ—Հնդկաստանի։

Աստ.

Սրբազան Հայր և Հոգևոր Ծնող մեր։

Խոնարհաբար հրաւիրելով Ձերդ Սրբազնութեան քաղցր ուշադրութիւնը՝ Հոգաբարձութեանս 4—16 Դեկտ. 1898 թուականաւ մեր Ուսումնարանների կրթական և տնտեսական վիճակի մասին տուած տեղեկագրի Երրորդ Յօդուածին վերայ՝ Օրիորդաց Դպրոցի նկատմամբ (որն որ ամենակենսական նշանակութիւն ունեցող մէկն է ըստ մեր խորին համոզմանց) որդիական համարձակութեամբ վստահանում ենք հետեւեալ խոնարհ թելադրութիւնը անել թողնելով զայն Ձերդ Սրբազնութեան բարենկատողութեանը։

Զուղայիս Զարսու թաղին մէջ կայ մի այգի՝ «Միջին Այգի» կոչուած, որ պատկանում է Կուսանաց Անապատին և որն որ ընկած լինելով Զուղայի կեդրոնական թաղում՝ ամենայարմար վայրն է Օրիորդաց Դպրոց լինելու համար ըստ մեր խոնարհ կարծեաց։

Ուստի խոնարհաբար խնդրում ենք բարեհաճիք ի սէր մեր փափկասեռ մատաղ մանկանց՝ հրամայել կուսանաց մենաստանի միաբաններին, յիշեալ այգւոյ (իբր) մէկ երրորդ մասը յատկացնել նոր Դպրոցի շինութեան համար. որով մի անգամ ընդ միշտ ազատած պիտի լինէք մեր ապագայ երջանկութեան աղբիւր եղող մատաղ սերնդին այն բազմադիմի վարակիչ հիւանդութիւններէն՝ որոնց յաճախ ենթարկվում և մինչ անգամ չարաբաստ ոմանք անգութ մահուան սև ճիրաններին զոհ երթալու անխուսափելի վտանգին են ենթարկվում անմեղաբար և անգիտակցաբար միանգամայն։

Ի հարկէ Ձերդ Սրբազնութիւնն ապագայ աղէտից առաջն առնելու հեռատեսութեամբ՝ այս մեծ բարիքը Հայրաբար և մարդասիրաբար անելով մեր անմեղ մանկուանց՝

կատարեալ գոհացումն առած պիտի լինէք մեր հասարակութեան վաղեմի բաղձանաց և բուռն ցանկութեան, որի փոխարէն միշտ՝ անմոռաց երախտագիտութեամբ և օրհնութեամբ պիտի յիշէ իւր Հոգեոր Հովուի և մեծ բարերարի անունը, քանի որ գոյութիւն կունենայ այդ նորակառոյց՝ փրկաւէտ կրթական տաճարը Ջուղայիս մէջ։

Պատիւ ունիմք խորին ակնածութեամբ մնալ
Ձերդ Բարձր Սրբազնութեան
Ամենախոնարհ ծառայք և որդիք՝
Տէր Ռէթէոս Դաւթեան
Յ. Տէր Կ. Յորդանանեանց
Մինաս Տէր Դ. Ս. Նահապետեանց
Մարտիրոս Ս. Յարութիւնեանց
Հ. Տէր Պ. Հ. Յակոբջանեանց

Հոգաբարձք Ազգ. Երկս. Ուսումնարանաց Նոր—Ջուղայու։

Այս այսպէս կարդացուելուց յետոյ Նորին Բարձր Սրբազնութիւն՝ Առաջնորդ Հայրը սկսում է խօսել, քարոզել, յորդորել. թէ Եկեղեցիներում, թէ տներում, ընդհանրապէս և անհատաբար մինչև որ յաջողւում է ժողովրդին տրամադիր անելու 'ի գործակցութիւն սոյն օգտակար և բարենպատակ ձեռնարկին։ Ս. Առաջնորդը նախ ժողովրդին այս գաղափարին մերձեցրեց ոչ պաշտօնական ձեւով, այսինքն անուղղակի միջոցներով խմացաւ շատերի տրամադրութիւնը դէպի մի այսպիսի գործը և ապա ձեռնարկեց նրան գլուխ բերելու համար Նոր-Ջուղայի Հայ հասարակութիւնը դրեթէ առանց բացառութեան համակիր եղան գործին, ցանկութիւն յայտնեցին լինել զօրակիցն իրենց Առաջնորդին 'ի գլուխ բերելու համար այն գործը՝ որ ուղղակի իրենց շահերին է նայում։ Ուստի այսպէս ձեռնարկուեց հանգանակութեան, և կարճ միջոցում անապատի չափով կատարուեց նուիրատուութեան գործը։ Շատեր պատմում են որ սոյն օրինակ հանգանակութիւն Նոր-Ջուղայում ուրիշ առթիւ էլ բացուած է եղել, սակայն ոչ մի ժամանակ այսքան արդիւնք չէ ունեցած։ Մինչ մի կողմից հանգանակութեան գործն էր

շարունակւում միւս կողմից Ս. Առաջնորդը որոնում էր մի յարմարագոյն Դպրոցատեղի, և երբ Հոգաբարձութեան կողմից նշանակուած այգուն անձամբ տեսաւ՝ որոշեց որ նոր կառուցանելի շինութիւնը նոյն այգուն արեւելեան կողմը լինի, դա Կուսանաց անապատի սեպհական մի այգին է, որ կոչւում է միջին այգի և որ գրեթէ Նոր-Ջուղայի կեդրոնումն է Կուսանաց անապատի արեւմտահարաւի կողմը դէպի Դաւրէժ կոչուած թաղը։ Սոյն այգին որքան որ արդիւնաւոր մի կալուած էր յիշեալ անապատին, սակայն անապատական Կոյսերն ըստ հրամանի Ս. Առաջնորդին նրան զոհեցին Ազգ. ընդհանուր շահերին երբ Ն. Բ. Սրբազնութիւնը պատուիրեց նրանց հետեւեալ իմաստ պարունակող գրութեամբ որ չ'խնայեն դայն յ'օգուտ Ազգային մանկտուոյն։

Նոր-Ջուղայի Ս. Կատարինեայ անապատի հաւատաւոր, միանձնացեալ և պարկեշտասուն Կոյս սարկաւագուհիներին, Ողջոյն և Օրհնութիւն կը նուիրեմք։

Ձեզ յայտնի է, որ Մեր այստեղ ժամանելու օրերից ևեթ՝ Ձեր անապատի ծոցումն եղող Օրիորդաց Ուսումնարանին այցելելիս ոչ մի բան Մեր ուշքը չ'դրաւեց բացի Ուսումնարանին նիւթական շինութեան ապառողական վիճակից որը Մեր մատաղ սերնդին խամրեցնելով ենթարկում է թէ մարմնական և թէ հոգեկան թմրութեան. ճիշդ նոյն օրերից էլ հոգածութեանս առարկայ եղաւ նոցա այդ դըրութիւնից փրկելու հարցը։

Ա'րդ, առանց ժամանակ կորցնելու այժմից նոյն հարցը լուծելու մտադրութեամբ սիրեցեալ Հօրս հրաւիրում եմ, որ իւրաքանչիւրը նոցանից ըստ չափու կարեաց բարեհաճի նուիրաբերութեամբ հանդէս գալ յօգուտ կառուցանելի կրթական տաճարին, որով միայն հաւատացած ենք Հայաստանեայց Եկեղեցու հաստատուն և պայծառ լինելուն։ Ա'րդ, սիրելի որդեակք. պարտք եմ զգում պատուիրել և Ձեզ, որ դուք ևս չ'մնաք անմասն այս խնդրում, որ նայում է Հայաստանեայց Ս. Եկեղեցու բարոյական շահերին, առ այս դուք ևս առաւել համակրանօք վերաբերուելու պարտաւոր էք ըստ Ձեր կոչման՝ այո, դուք որ ըստ Տէրունական խօսքի թողած զաչխարհ և ամեն ինչ՝ որ աշխարհին է և միայն

Փրկչական խաչը չալակած նրա եռեից դնալու յօժարութիւնը էք ցոյց տուած։

Յիշեցէք, որ Ձեզապիսիներ Եւրոպայում «Դիմութեան քոյրեր» քաղցր մակդիրն են ստացել գործով, որոնք ոչ միայն մտածում և սատարում են իրանց համազգի մանկանց դաստիարակութեան գործին, այլ և ընդարձակելով գործունէութեան սահմանը, օգնում են և օտարազգի թշուառ որբերին մինչև անգամ։

Կրթական սոյն գործը Ձեր կարողութիւնից վեր բան չի պահանջում Ձեզանից, միայն 2 ջրիբաչափ դեռին Միջին այդու արևելեան մասում ուր կառուցելու է Օրիորդական Ուսումնարանի շինութիւնը։ Կրկին պատուիրում եմ Ձեզ, որ բարեհաճիք ամենայն վեհանձնութեամբ և սրտի յօժարութեամբ նուիրել յիշեալ դեռինը, որով յուսամք թէ ոչ միայն ոչինչ կորցրած չէք լինի այլև դուցէ ապագայում կրկնապատիկ փոխարինուի Ձեր կուսաստանին։ Բարեհաճեցէք կարգադրել ըստ պատուիրանացս և փութով տալ Մեզ 'ի գիտութիւն։

12 Մարտի, 1899 թ.
Ի Վանս Ս. Ամենափրկչեան

Աղօթարար
Մաղաքիա Եպիսկոպոս
Տէրունեան
Առաջնորդ Հայոց
Պարսկ—Հնդկաստանի։

Դեռ հանդանակութիւնը շարունակում էր վարձուեցին բանուորներ և շինութեան գործին ձեռնարկուեց ընդ վերահսկողութեամբ Պ. Մարտիրոս Ս. Մ. Տէր Ոսկանեանցի Ապրիլի սկզբներում, քանդուեցին խաղողի որթերը և շինութեան Պլանը որոշուեց՝ մօտաւորապէս Մոսկուայի Լազարեան Ճեմարանի յատակագծով։ Այստեղ կարծում ենք մի ինչ որ խորհրդաւոր բան կատարուեց, այն է խլուեցին խաղողի որթեր, նրանք դադարեցին աճելուց և պտուղ տալուց որպէս զի նոցա տեղ տնկուին բանաւոր բարունակներ և արտադրին հոգեոր պտուղներ, 'ի զմայլումն թէ հոգւոյ և թէ մարմնոյ, որպէս զի Հայկազն մանկտիք արբենան և ոչ 'ի դինւոյ խաղողաբեր որթոյն...։

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Մայիս 16ից մի շաբաթով առաջ արդէն ծանուցուած էր Նոր-Զուղայի Հայ հասարակութեան Ուսումնարանին հիմնարկութիւնն օրհնելու հանդիսի մասին։ Հանդիսատեսներ Նոր-Զուղայեցիք, սրտատրոփ և անհամբեր սպասում էին ողջունել Մայիսեան 16 բորդ սուրբ առաւօտի գեղափայլ արփին, որ պէտք էր ճառագայթէր նրանց հոգու խորքերում ողողելով այնտեղ քարոյական գիտութեան լուսոյ նշոյլներ...։

Կէս օրից յետոյ էր, ժամի 5 ին օրուան չոգ ժամերը տեղի էին տուել վարսաւոր ծառերի ձիգ շուքերին և պտղերի երկար ստուերներին, այս բոպէներին մի ընդհանուր կենդանութիւն էին ստացել Նոր—Զուղայի նեղ և անկանոն փողոցները, ամեն կողմից խմբերով շտապում են սպիտակաթոյր ծածկոցներով կիներ և օրիորդներ դէպի միջին կոչուած այդին, ուր խմբուած են արդէն ամեն հասակի տղամարդիկ, լցուած անպատում ցնծութեամբ։ Այդումն ենք, այդ բաւական տարածութիւնը բռնած են երկուսեռից մի խուռն բազմութիւն, որոց ոտքերի տակը արորւում և փշրուում են արևաթուրծ թոյլ ալիւռները, շատերը բարձրացած են նորաշէն որմերի վերայ, որ արդէն հասակչափ բարձրացած են։ Դալիս է Սրբազան Առաջնորդը որի աջ ու ձախ կողմերի վերայ շուրջառազեստ կանգնած են «Առաջնորդական Խորհրդարան»ի Արժ. Անդամներ և Պուրվարու, Քեռազազի և Քեամարայի սպիտակահեր գործակալ Քահանաներ, որոց շարքն երկարացնում են նորաշէն հաստատութեան համակիր Ս. Կատարինեայ անապատի մի քանի մաքրակրօն կոյսեր և պարկեշտուհակ Դպրոցական Օրիորդներ, երգեցող դպիրներ և այլն. սկսում է Օրհնութեան կարգը և տալա շրջում է Թափօրն խաչով ու խաչվառով և վառուած մոմերով անդաստանօրհնէնքի ձեով։ Ժողովրդի բազմութեան ձայնն ու չչուկն անլսելի էր դարձնում հոգեոր արարողութեանը. կարճառև պաշտամունքից յետոյ մինչ Օրիորդներն երգում էին քաղցրաձայն Ազգ. երգեր, Ն. Բ. Սրբազնութիւնը իւր ձեռքով հիման մէջ դրաւ պղնձի տախտակն, որի վերայ փորագրուած էր սա վերտառութիւնը «Հիմնարկութիւն Դպրոցիս Յեղ 'ի Թագաւորութեան Արեգ. Մօզաֆֆարէդդին Շահի 'ի Հայրապետութեան Վեհափառ Մկրտիչ Ա. Կաթողիկոսի և յԱռաջնորդութեան Սրբազան

Մաղաքիա Եպիսկոպոսի 'ի 12 Մայիս 1899»։ Սրանից յետոյ յառաջ անցաւ օրիորդ դատրիկն և 'ի դիմաց իւր աշակերտակից ընկերուհիներին կարդաց հետեւեալ ճառը.

«Գեր. Ս. Հայր, և Յարգամեծար Հանդիսականներ. Խնդրեմ թոյլ տուէք ինձ տկար էակիս լինել այնքան համարձակ, որ կարենամ ի դիմաց աշակերտակից քոյրերիս արտայայտել մեր ամենիս երախտագիտութիւնով զեղուած սրտերի զգացումները, զգացումնե՞ր, որ Դուք դրոշմեցիք մեր մանկական սրտի տախտակաց վերայ ոսկեղէն տառերով։ Նա աւելի Դուք բազմերախտ և Ս. Հայը, որ այժմիկ հանդիսիս լուսաւորիչ վառքն էք և որ Ձեր չնորհաբեր գալստեան սկզբի օրերից ևեթ հոգածութեան առարկայ արիք մեր կրթական վիճակը, Դուք որ միշտ յղացաք անմիջապէս և ձեռնարկեցիք միջոցների, որոնցմով կարելի էր փրկել մեզ մեր Ֆիզիքական գրութիւնը քայքայող դպրոց անուն խաւարչային բանտային խցիկներից, այո՞, Դո՞ւք ձայնեցիք այնպէս՝ ինչպէս հազարաւոր տարի առաջ ձայնեց Հայաստանեաց լուսատու կանդեղ Ս. Գրիգորիոս Լուսաւորիչն ասելով «Նկայք չինեսցուք սուրբ զխորանն լուսոյ...», արձագանք տուին նրան Հայաստան աշխարհ, իսկ այժմ սատ արձագանք տուին Ձերդ Բ. Սրբազնութեան ամենայն մեծարանաց արժանի սատ համախմբուած մեր Հայրերն ու Մայրերը, և ահա հիմնարկուած ենք տեսնում այն լուսոյ խորանն, ուսման տաճարն և գիտութեան ճեմարանը, որի Նաւակատեաց բերկրաւիթ հանդէսը կատարելու և նուիրագործելու համախմբումն է տեղի ունեցել սոյն ժամիս։ Հանդէպ այս սխրալի տեսարանին անկարելի է չ'մտաբերել Ձեր՝ մեզ համար արած զոհողութիւններին և չօրհնել երախտախառն հրճուանքով բարերարներիդ մեզ համար ս. անունը։

Ա. այժմ մենք ոչինչ ունինք Ձեզ փոխարինելու՝ բացի սրանից որ բաց ենք անում Ձեր առաջ անբացատրելի երախտագիտութեամբ լցուած մեր սրտերին, ուստի խնդրում ենք մեր սրտերի վերայ կարդացէք մեր բուռն զգացումներին, որոնց չի կարելի բառերով թարգմանել Ձեզ։

Խնդրում եմ բարեհաճեցէք լսել մեզանից այն ձայնը որ կանչում է Ձեզ «Շնորհակալութիւն Տէրք և Պարոնայք...»

Նոր—Զուղա
16 ին Մայիսի.

Օրիորդ դատրիկ
Ե. Կ. Դաւթեանց.

Սրանից յետոյ Սրբազան Առաջնորդը սկսեց իւր յատուկ եռանդով բանախօսել, մօտաւորապէս հետեւեալ իմաստով.

«Սիրելի ժողովուրդ Հայոց. Ուսումնարանիս հիմնարկութեան հանդէսը կատարուեցաւ Եկեղեցական պատշաճ ապարողութեամբ, հայցելով Աստուածային օրհնութիւնն ու հովանաւորութիւնը կառուցանելի իմաստութեան տաճարին վրայ, զի առանց Աստուծոյ օրհնութեան՝ չէք ճշմարիտ լուսաւորութիւն և իմաստութիւն։ Սոյն արարողութեամբ մեր հաւատոյ տեսական մասը միայն յայտնեցինք, կը մնայ մեզ այսուհետև գործնականապէս ապացուցանել թէ կը սիրենք արդարև իմաստութիւնն ու ճշմարիտ լուսաւորութիւնը, և այս կը լինի, երբ Ուսումնարանիս շէնքը կառուցանելէ յետոյ՝ ամեն զոհողութամբ կը ցանկամք նորա ներքին բարեկարգութեան և ուսումնական յառաջադիմութեան հոգ տանել, տալով մեր ազգի զաւակաց ընտիր և հարազատ ազգային

դաստիարակութիւն, և կրթելով զնոսա Աստուծոյ սուրբ երկիւղին մէջ։ Ես այն ժամանակ պիտի համոզուիմ թէ արդարև Զուղայու Հայ հասարակութիւնը կը սիրէ մի այսպիսի երկիւղած և իմաստուն դաստիարակութիւն տալ իւր որդւոց՝ իւր մանչ թէ աղջիկ զաւակաց, երբ օգնէ ինձ Ս. Ամենափրկչեան Վանաց ծոցում և Հոգևոր Դպրանոց բանալու, որուն համար Զեզ անցեալները հրաւէր կարդացի Ս. Եկեղեցւոյ մէջ և ահա աստ կը կամիմ կրկնել հրաւէրս այս գերազանցապէս պատշաճ առթիւ։ Հարկ է գիտնալ թէ թռչունը մի թևով կարող չէ թռիլ. մենք կարն 'ի կաղ կ'ընթանամք, եթէ միայն մեր զաւակաց մտաւոր պաշարովը բաւականանամք. մեզ համար կարևոր է և անհրաժեշտ որ մեր զաւակունք մշակեն իրենց մտքին հետ՝ իրենց սիրտն ու հոգին միանգամայն, պէտք է նաև փութալ մի «Հոգևոր Դպրանոց»ի հաստատութեամբ տալ մեր թշուառ ազգին կատարեալ և ընտիր դաստիարակուած Հոգևոր պաշտօնեաներ, կրօնի քաջավարժ ուսուցիչ-

ներ, այս է իմ անկեղծ փափաքը, այս է ազգային կարևորագոյն պէտքը, զոր հարկ է լրացնել։ Թող Աստուած օրհնէ մեր և ձեր ջանքերը և պսակէ մեր սոյն բարի և սուրբ ցանկութիւնը։

Այսպէս հանդէսը փակւում է, Հայ ժողովուրդը քաղցր տպաւորութիւններով վերադառնում է տանելով իւր հետ քաղցր յոյսեր ու յոյզեր։ Հանդիսի լուսանկարն առաւ մի Պարոն որ մօր կողմից Հայ և հօր կողմից Գերմանացի է։

Ս. Առաջնորդն ու իւր ժողովուրդն իրենց ցանկութիւնը կատարուած են տեսնում, չինութեան գործը կը շարունակուի՝ Նոր—Զուղայեցիներից հանգանակուած զուտ գումարովը, այդ գումարին հետ կը ծանօթանայ ընթերցողը տեարակիս վերջում ցուցուած անուանացուցակից ուր նշանակուած են ամեն մի մասնակից եղող անձին անունն և ազգանունն և ամենից յետոյ նրանցից գոյացած համագումարը, որը պահ դրուած է Պ. Հայրապետ Տէր Պ. Հ. Յակովբջանեանցի մօտ իբրև գանձապահի. ուշադրութեան արժանի է մի ուրիշ գեղեցիկ նպատակ, այն է Ս. Ամենափրկչեան Վանքում մի «Հոգևոր Դպրանոց»ի հաստատման հարցը, որի օգտակարութեան մասին քանիցս խօսած էր և այժմ սոյն առթիւ էլ շեշտեց Ս. Առաջնորդը։ Գիւղական տգէտ քահանայացուների ձեռնադրութեան վերջ տալու միակ ճանապարհն այս է և հէնց այս պատճառով էլ Ն. Բ. Սրբազնութեան միտքը զբաղեցնող կարևոր հարցերից մինն է այս, վասնորոյ կոչումն արած է արդէն Նոր—Զուղայեցւոց, որ ըմբռնեն այս խիստ կարևոր հարցի նշանակութիւնը և ինքնաբերաբար ցանկացող եթէ լինի՝ կարող է իւր լուման մատուցանել ուր որ անկն է, որպէսզի ժողովուրդը ինքզինքը ճնշուած չ'զգայ, այս մասին տումար շրջեցնել և փող հաւաքել աւելորդ համարելով, այս կամաւոր ձեր արժան դատեց Ս. Առաջնորդը։ Միայն մեր Հընդկաբնակ, Զաւայաբնակ և այլ կղզեբնակ մեր սիրելի ազգաւէր և հայրենասէր ազգայնոց դիմումն արաւ սոյն երկու

հաստատութեանց համար ևս, մի յատուկ օրհնութեան Կոնդակով, որի պատճէնը յարմար դատուեցաւ այստեղ յառաջ բերել և յանձնել յարգելի ընթերցողաց ուշադրութեանը յուսալով որ այդ ունենալու է իւր չահաւոր հետեւանքը յօգուտ սոյն բարենպատակ օգտաբեր ձեռնարկներին։ Կը յուսանք որ փոքր ժամանակում չնորհիւ Ս. Հօր և իւր գործակիցներին Նոր-Զուղան կ'ունենայ իւր աղջկանց բարեկարգ Ուսումնարանն և Հոգևոր Դպրանոցն, որոց վերջնից ոչ թէ միայն Նոր—Զուղա այլև շրջակայ անմխիթար գիւղերն էլ իրենց բաժինը կ'ստանան և կ'օրհնեն բարեգործների ազգասիրական ու մարդասէր ջանքերը։

Պատճէն

ՄԱՂԱՔԻԱ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՇՆՈՐՀՕՔ Ս. ՀՈԳԻՈՅՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆԱՅ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅՈՒ։

Յ'Որմէ Նուիրի ողջոյն Քրիստոսաւանդ և Հայրական լիազեղուն օրհնութիւն Գերապատուեալ Հասարակութեան Հայոց բնակելոց 'ի Տիրախնամ քաղաքս Հնդկաստանի՝ 'ի Կալկաթա, 'ի Բոմբայի, 'ի Դաքա, 'ի Ռանգուն, 'ի Մանդլէ, 'ի Մադրաս, 'ի Պինանդ, 'ի Սինգափուռ, 'ի Միրզափուռ, 'ի Կամփուռ և 'ի վերին երկիրս Հնդկաց։ Եւ 'ի Ջաւա կղզւոջ՝ 'ի Բթաւիա, 'ի Սմարանդ, 'ի Սուրբայիա և 'ի շրջակայս Նորին 'ի Բալի, 'ի Մալանդ, և այլն և այլն, Արժանապատիւ Քահանայից, քաղցրանուագ Դպրաց, Մեծապատիւ Եկեղեցպանաց և Պաշտօնատարաց Ս. Եկեղեցեաց, Մեծահամբաւ Վաճառականաց, Արդարասէր օրէնագիտաց, ճշմարտութեան ջատագով փաստաբանաց, աշխատասէր գրագրաց, բազմահմուտ և ներհուն Ուսուցչաց, և դաստիարակաց Ուսումնարանաց. Միաբանասէր Ընկերութեանց, և 'ի զանազան գործառնութիւնս պարապող Պատուարժան Պարոնայց, Ճարտարագէտ արհեստաւորաց, տընտեսագէտ Տանուտերանց, ժրագլուխ Տանտիկնայց, բարեկիրթ և զաւակասէր մարց, Բարեշառաւիղ և սրբասէր երիտասարդաց և պատանեկաց, Համեստափայլ օրիորդաց, և առհասարակ մեծաց և փոքունց և ամենայն չափու և հասակի 'ի Քրիստոս հաւատացելոց, հոգևոր որդւոց Ամենափրկչեան Մայրավանիս և Մեր՝ յարազուարճ բերկրանօք խնդալ 'ի Տէր։

Շնորհք, Սէր, և խաղաղութիւն Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ և օրհնութիւն Ամենափրկչեան Մայրավանիս և Մեր սփռեալ տարածեսցի

'ի վերայ հոգւոց և մարմնոց Ձերոց, տանց և օրհնեալ գերդաստանաց և Սիրասուն զաւակացդ և լցուսցէ զՁեզ առատապէս ամենայն աջողուածովք բարեաց աստ և 'ի հանդերձելումն, ամէն։

Եւ ընդ Տեառնաւանդ սուրբ ողջունի և օրհնութեանս յայտ առնեմք Սիրելեացդ Մերոց 'ի Տէր զի՝ 'ի գալ հասանել Մեր աստ 'ի Ս. Վանս Ամենափրկչեան յԱթոռ Առաջնորդութեան Մերոյ և 'ի կեդրոնավայր Թեմիս Հայոց Պարսկ—Հնդկաստանի, թէ և ուրախութեամբ սրտի տեսաք հաստատեալք 'ի Նոր—Ջուղա Հայրենին Ձեր ջանիւք և օժանդակութեամբք Մերազնէից Հայոց Նոր—Ջուղայեցւոց և Համազգեացդ Հնդկաստանի և Ջաւայու զՈւսումնարանս վասն երկսեռ մանկանց Ազգիս և կառուցեալ շինուածս յատուկ յատուկ վասն նոցա, յորս հոյակապ և հսկայաշէն «Կենդրոնական,» կոչեցեալ Ուսումնարանն տղայոց՝ արդարև արժանի է գովութեան վասն իւր փառաւոր դրութեան և ըստ պահանջման ժամանակիս ընդարձակ դասարանօքն և չքեղութեամբն։ Այո՝ վասն օրիորդաց ևս հիմնարկեալ էր 'ի քառասուն ամաց հետէ և Ուսումնարան մի ծախիւք Հիմնադրի Նորին Բարեյիշատակ Հայրենասիրին այժմ Հանդ. Պարոն Մանուկայ Յորդանանեան և Նեղբին ծախք Նորին հոգացեալ 'ի նմանէ յընթացս այդ երկար ժամանակի, որպէս և ցարդ շարունակի ևս, այլ յայնժամ երբ հիմնարկեցաւ այդ օրիորդական Ուսումնարան՝ վասն իբր քառասուն աշակերտուհեաց էր, ուստի և դասարանք Նորին չեն այնքան ընդարձակ և բազմաթիւ, որպէս այժմ պահանջէ ժամանակս. զի թիւ աշակերտուհեացն հետ զհետէ բազմանալով՝ զարդիս մերմ 250. աշակերտուհիք պատսպարին 'ի նմին, անդ՝ ուր երբեմն 40. էին։ Այսու հոգեոր Սիրելիքդ Մեր մակաբերելոց էք թէ՝ յինչ դրութեան կարէին այն բազմաթիւ մատաղ մանկտուհիք Ազգիս զուսմունս իւրեանց ընդունիլ, ուր պարտաւոր էին խառնեալ մնալ խիտ առ խիտ 'ի ներքոյ հեղձուցիչ օդոյ փոքրիկ քանի մի դասարանաց, որ վընասել ունէր առողջութեան անձանց նոցին։ Ահա զայս անպատեհութիւնս 'ի նկատի առեալ Մեր՝ և կամելով զՍիրելի հոգեոր զաւակունս Մեր աղատ պահել 'ի վերահաս հիւանդութեանց, որք յաճախ պատահէին, և 'ի վտանգաց ապառնացելոց կենաց նոցին, զգալի եղև յոյժ Մեզ հարկ կառուցանելոյ 'ի հիմանց զնոր օրիորդական Ուսումնարան

մի 'ի միջավայր Նոր—Ջուղայուս ընդարձակ բազմաթիւ և բարձրայարկ դասարանօք և անդ 'ի հնոյն փոխադրել զօրիորդսն, առ ի ընդունիլ զուսմունս իւրեանց 'ի ձեռն վըկայեալ հմուտ վարժապետաց և վարժուհեաց, զորս ունիմք բերել տալ 'ի ժամանակին 'ի հեռաւոր քաղաքաց, զի հոգ Մեր է, ոչ միայն ընդարձակել զշինուածսն՝ այլ և հոգալ զկարեւոր պէտս դասաւանդութեան նոցին ըստ եղանակի արդի լուսաւորեալ ազգաց։ Քանզի երբ Ազգ մեր ունիցի կրթեալ և բարեբարոյ օրիորդս, ունիցի ևս զբարի և զուսումնական մայրացուս, և ապա նոքին կարող լիցին զծոյացին Սիրելի զաւակունս իւրեանց ընդ կաթին և մայրական խնամոցն իւրեանց կրթել 'ի բարի բարի ուսմունս և Ջամբել նոցա զկաթն ուսմանց Ս. կրօնի Քրիստոնէութեանս, Աստուածպաշտութեան, Ս. Գրոց, բարոյագիտութեան և Ազգասիրութեան և այլն և այլն, յայնժամ Ս. Եկեղեցիս պայծառասցի բարեկիրթ որդւովք և Ազգ մեր փառապանծ հոխասցի նոքօք, որք տարելոքն են ապագայ դոյութեան նորին, յոյս և ապաւէն սրտի։ Ահա զայսոսիկ խոկալով Մեր ընդ Բայեկջան Կառավարչաց երկսեռ Ուսումնարանաց մերոց տեղւոյս, ձեռնարկեցաք 'ի գործ շինութեան Նոր—կառուցանելի օրիորդական Ուսումնարանին։ Այլ կամելով զի՝ ծախսագումար շինութեան մեծ շինուածոյն 'ի Հասարակութենէ Հայոց Նոր—Ջուղայուս և Ձեր Հնդկարնակ և Ջաւայարնակ Հայրենասիրացդ զոյասցի իրրև զոլծ մի Ազգային համազգայնոց մասնակցութեամբ և նպաստիւք շինեալ, և ոչ թէ անհատ քանի մի անձանց. վասն որոյ նախ հանդանակութիւնս առնել տուաք 'ի Նոր—Ջուղայեցի Ազգայնոց թաղէ 'ի թաղ. նախ Մեք գրելով 'ի Մատենին հանդանակութեան դդումար (1,000) մի հազար Պարսից դրամանեաց և 'ի Թեմից Ս. Եկեղեցեաց տեղւոյս յորդորս կարդացաք Հասարակութեանն մասնակցիլ այնմ նպաստիւք իւրեանց, զոհ եմք զի՝ Սիրելի որդիք Մեր, որոց մեծամասնութիւնն թէև աղքատ՝ յոժարութեամբք սրտի մասնակցեցան այնմ և ըստ կարեաց իւրաքանչիւրոցն գրեցին և հատուցին նպաստագումարս, որոց միջի 750. կամ 500. դրանի նպաստատուք ևս գտան, և համագումարն մինչ ցայժմ հասեալ է ց'17,000. դրանիս, այսու գումարովք այժմէն սկզբնաւորեալ եմք զշինութիւնն 'ի հիմանց և հանդէս Հիմնարկութեանն ևս կատարեցաք 'ի 16. Մայիսի ամսոյս 'ի Ներկայութեան խառն երկսեռ

քաղմութեան. և գործ չինութեանն չարունակի անընդհատ։

Թողեալ զհոգս օրիորդական Ուսումնարանին՝ զուշադրութիւն Մեր նուրեալ եմք և յայլ մի ամենակարևոր խնդիր, որ է կրթութիւն Քահանայացուաց Թեմիս, զի այս խնդիր՝ ոչ թէ 'ի Թեմս Մեր միայն յուզի՝ այլ և 'ի հեռաւոր Թեմս Հայոց Ռուսաստանի և Տաճկաստանի, և յԱզգասիրաց հոգս լինի կրթել զՔահանայացուս մեր 'ի հարկաւոր ուսումունս և ապա ձեռնադրել զնոսա յօգուտ Ազգի և 'ի պայծառութիւն Ս. Եկեղեցեաց. և Մեք առ 'ի դարման տանել այսմ ամենակարևոր խնդրոյ և ըստ Թեմականաց Մերոց եղելոց 'ի Պարակ—Հնդկաստան՝ առաջադրեալ եմք բանալ 'ի ծոց Ամենափրկչեան Ս. Վանացս զԴպրանոց մի Հոգևորական 'ի պէտս ժառանգաւորաց Ս. Եկեղեցւոյս, ուր կրթեսցին ուշիմ և մտավարժ պատանեակք Քահանայացուք 'ի հարկաւոր ուսումունս հոգևորս 'ի ժամերգութեան, 'ի կրօնագիտութեան Հայաստանեայց Ս.Եկեղեցւոյս, 'ի Ս. Գիրս Աստուածաշունչս և Եկեղեցական Հաւց. նաև 'ի լեզուագիտութեան, և այլն և ապա ձեռնադրեսցին 'ի Մէնջ 'ի Քահանայս։ Այս գործ ևս բաւականին ծախսագումար պահանջէ թէ վասն վարձուց հմուտ և նպատակայարմար ուսուցչաց, զորս բերել տալոց եմք 'ի հեռաւոր քաղաքաց և թէ վասն ներքին ծախսուց Ուսումնարանին. թողեալ զայս՝ նորոգել հարկ է և զքանի մի զհին չինուածս սենեկաց Վանացս և ընդարձակել զայնս, զի յարմարաւոր լիցին վասն Հոգևոր Դպրանոցին։ Վերյիշեալ Հայրենասէր Հանդ. Պարոն Մանուկ Յորդանանեան ըստ ժամանակին ըմբռնելով զկարևորութիւնս գործոյս՝ 'ի կենդանութեանն հրիտակեալ էր զգումար մի յանուն Հոգևոր Դպրանոցի միոյ հաստատելի ասա 'ի Նոր—Զուղա վասն կրթութեան Քահանայացուաց Թեմիս, և որ հանդերձ քանի ամաց տոկոսիքն մինչ ց'վերջ 1898. ամի լեալ էր գիւղ Զաւու, 8,666—19. որ է այժմ 'ի խնամս Ս. Յովհ. Եկեղեցւոյ Հայոց Բթաւիոյ։ Մեծա. Ատեան Յանձանձանաց տեղւոյն ըստ առաջադրութեան Մերում խոստացեալ է Մեզ զտոկոս դոյն գումարոյ ամ ըստ ամէ յղել ասա առ Մեզ 'ի ծախս նոյն Հոգևոր Դպրանոցի, սկսեալ 'ի տարեվերջէ 1899. տարւոյս, այլ այդ ամ ըստ ամէ առաքեալ տոկոսն հարկաւ չունի բաւական լինել տարեկան մեծագումար ծախսուցն. այլ միայն մի մասն լիցի տարեկան եկամտիցն նորին։

Վերոյգրելոցս առաջի եղաք Հոգևոր Սիրելեացդ Մերոց գնալատակս Մեր վասն օրիորդական և հոգևոր Ուսումնարանացն և առ 'ի մասնակից առնել զՁեզ ևս այնց Ազգային գործոց նպաստագումարաց Ձերովք ևս՝ ահա այսու Օրհնութեան Կոնդակաւ Մերով որոշեցաք և կարգեցաք 'ի վերայ հանդանակութեան գործոյ զԱրժանապատիւ Տէր Պապակ Քահանայն Հ. Յակոբջանեանց, որ լրացուցեալ ըստ Թեմն իւր Ս. Եկեղեցւոյն հայոց Կալկաթու, անդ գտանի տակաւին, և որ արժանաւոր է կոչման յայս Ազգօգուտ գործս, և միշտ ջանացեալ է տակս օգտի Ազգային գործոց թէ ասա 'ի հայրենիս և թէ 'ի Թեմս իւր. մանաւանդ զի՝ յերկար ամաց հետէ վարեալ է զպաշտօնս ուսուցչութեան յօրիորդաց և 'ի տղայոց Ուսումնարանս տեղւոյս գովելի ջանիւք։ Արդ՝ 'ի դալն Նորին անձամբ առ Ձեզ ըստ հրամանի Մերում, և 'ի մատուցանելն Ձեզ զժողովինեալն և վաւերացուցեալ առ 'ի Մէնջ զՏոմար հանդանակութեանն (որոյ առաջին էջն յատկացեալ է հանդանակութեան օրիորդաց Ուսումնարանին, իսկ երկրորդն յանդիման Նորին՝ հանդանակութեան հոգևոր Դպրանոցին, որպէս յայտնի է յԱրձանագրութիւնէն.) և բանաւոր ևս 'ի ցուցանելն Հոգեհարազատ Սիրելեացդ Մերոց զպէտս ծախուց այն Օրիորդական և Հոգևորական Ուսումնարանացն՝ Հայրարար խնդրեմք 'ի Ձէնջ պարտուպատշաճ յարգանաք ընդունիլ զնա, և զԱզգասիրական նպաստագումարս Ձեր գրել 'ի նմին յանկանէ յանուանէ՝ յանձնելով զգումարն 'ի ձեռս Նորին, զի ըստ այնց հաստատեսցէ նա առ Մեզ և առ Պատուարժան Հոգաբարձութիւն Ազգային երկուս Ուսումնարանաց տեղւոյս, առ 'ի հոգալ ըստ պատշաճի զծախս թէ չինութեանն և թէ ներքին կառավարութեան Ուսումնարանացն այնոցիկ յօգուտ Հայրենեաց Ձերոց Նոր—Զուղայուս և 'ի յառաջադիմութիւն մանկտեաց Ազգիս։ Յուսամք թէ արդիւնաւէտ լիցին այդ օժանդակութիւնք Ձեր, և գրեսցին այնոքիկ 'ի-չարս Ազգասիրական գործոց Ձերոց, զորս միշտ ցուցեալ էք և գործադրեալ վասն Հայրենեաց Ձերոց Նոր—Զուղայուս։

Եւ Մեք աղաչեմք զամենաբարին Աստուած պահել զՁեզ զամենեսին 'ի կատարեալ առողջութեան և 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր բարիս, օրհնել զձեզ և զդործս ձեռաց ձերոց,

9853

զարդարել զՁեզ հոգևոր բարեպաշտութեամբք և ամենայն առաքինական գործովք, զօրացուցանել զորդիս և զգաւակունս Ձեր, հանգուցանել զհոգիս ննջեցելոց Ձերոց 'ի լոյս Աստուածութեան իւրոյ, ամէն։

'ի 17. Մայիսի 1899. ամի։
'ի Ս. Վանս Ամենափրկչեան
'ի Նոր—Զուղա, Համար 65։

Մնամք Աղօթարար Ազգիս
Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեան
Առաջնորդ Հայոց Պարսկ—Հնդկաստանի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առ Հայ Հասարակութիւն Նոր-Զուղայու

Սիրելի Ժողովուրդ։

Պատմական դարերից 'ի վեր թէ ինչ դեր են կատարում ազգեր կրթութեամբ եւ դաստիարակութեամբ՝ դա մեզ յայտնի է ժամանակակից փաստերով, այս մասին յաճախ խօսուած ու կրկնուած է շատ շատերից, չ'կարծեմք ամենից տգէտն անգամանգիտակ լինի սրան, առանց որի կեանքը մեռած է համարւում: Հայ ազգը չ'նայած այն ամեն աննպաստ հանգամանքներին, խոչ եւ խոչթերին, որոնք կատաղած գազանի պէս կայծ արձակող ժանիքներով են նրա առաջ կանգնած, էլի նա մաքառելով մաքառումէ ամենայն դժուարութեանց հանդէպ եւ յառաջ է տանում կրթութեան գործը՝ հաստատ համոզուած լինելով, որ նրանումն է հոգու եւ մարմնի փրկութիւնը: Բայց ցաւալի է ասել, որ տակաւին տեղ տեղ Հայեր լաւ ըմբռնած չեն այս իմաստով ուսման անհրաժեշտութիւնը երկու սեռի նկատմամբ եւս: Տեղս ժամանելիս երբ գոյութիւն ունեցող կրթական հաստատութեանց այցելեցինք, սրանցից Օրիորդաց բաժնում եղած միջոցին՝ նիւթական շինութեան անբարեկարգ եւ վատառողջ վիճակը վրդովեց մեզ եւ պահ մի ըմբռնեցինք, որ աղջկանց դատապարտել են բանտային կեանքի եւ գուցէ մինչեւ հիմայ էլ սխալած չենք: Նոյն առթիւ խորհեցանք նախ՝ Օրիորդներին զերծուցանել նոյն ճնշող եւ մեռցնող խուլ մթնոլորտից եւ ապա մի որոշ ընթացք տալ նոցա բարոյական վիճակին: Նոյն հարցն է որ առիթ է տալիս մեզ եւ ստիպում հրաւէր կարդալ Ձեզ Սիրելի ժողովուրդ, որ Ձեզանից անձնիւր անհատ իւրովսանն դրամական օժանդակութեամբ աջակից լինի մեզ 'ի գլուխ բերելու մի գործ՝ որի ամեն մի երեսի վերայ նըկարուած են Ձեր նիւթական եւ բարոյական շահերը գեղեցիկ գոյներով. թէ ինչպէս՝ որովհետեւ ժամանակի պահանջից համաձայն կենցաղագիտութիւն չ'ունեցողները միշտ էլ թշուառ են եղել, ուրեմն երբ մենք գիտենք թէ մեռած ենք առանց գիտութեան՝ սրանով խոստովանում ենք նրա մեծ կարիքը, հետեւաբար ջանքեր չենք խնայում ձեռք բերելու համար այդ մեծ բարիքը։ տեսնում ենք, որ առանց իդական սեռի դաստիարակութեան շատ էլ հեշտ

չէ ձեռք բերել՝ ահա՛ այստեղ հարկաւոր են դաստիարակ մայրեր մեզ համար, որ մանուկների կաթին հետ ջամբեն նոցա եւ ուսման ննդարար կաթը, մանաւանդ ճշմարիտ դաստիարակութեան կաթը. յայնժամ կը միամտինք թէ մեր տան հիմքերը վիմի վերայ են հաստատուում: Եթէ Ն. Զուղան իւր ոյժերն ամփոփէ եւ կրթական գործին մղումն տայ, յայնժամ նրանց պատանիները փոխանակ հազարաւոր փարսախ ճանապարհ կտրելու դէպի Հնդիկս եւ եղծանող, թուլացնող կլիմայի ենթարկուելու, կարող կը լինին իրանց ծննդավայրում ուսման ծարաւն առնել, եւ գիտէք յայնժամ մի այլ դժբաղդութեան առաջն էլ թումբ է քաշուում, այն է այլ եւս Զուղայեցի տերունդը կը դադարի օտարանալուց, կը ծնուի հայրենիքում՝ կ'ապրի եւ կը մեռնի այնտեղ, պէտք է կարողանայ իւր հացն իւր երկրից ճարել: Ազգ. ցաւերը վերացնելու միակ ճանապարհը մեր տերնդի կրթութիւնն է մի խօսքով Սիրելի ժողովուրդ, այս առթիւ էլ հրաւիրում եմ զՁեզ իւրաքանչիւրն ըստ իւր չափուն աջակցիլ ձեռնարկելի կրթական տաճարի շինութեան, չխնայել երբէք այն հաստատութեան որից ազգը՝ դուք, պէտք է ակնկալէք դաստիարակուած ճշմարիտ մայրեր ապագայում, չ'խնայել այն հաստատութեան, որ Ձեր բոլոր բարիքներ նրանից է բղխում. Հայրական օրհնութեամբ յորդորում եմ զՁեզ, որ առ այս լինիք պարտաճանաչ Հայ Քրիստոնեաներ եւ Ձեր օգուտը լաւ ճանաչէք, աներկբայ կացէ՛ք գործիս ս. նպատակի մասին, որ պարունակում է յինքեան հանրային եւ անհատական շահերին միանգամայն:

Այսպէս զառաջինն գալիս եմ սրտի յօժարութեամբ նուիրել իմ կողմից յօգուտ ցանկալի գործին:

Մնամ Ազգիս յառաջդիմութեան
Աղօթարար
Մաղաքիա Եպս. Տէրունեան
Առաջնորդ Հայոց Պարսկ—
Հնդկաստանի

12 Մարտ 1899
'ի Ս. Վանս Ամենափրկչեան 'ի Նոր Զուղա

Ց. Գ. Մեր հրամանաւ քաղաքիս Մ. Եկեղեցեաց կառավարիչք գումարուելով՝ յետ լուրջ խորհրդակցութեան ըստ ընձանաց մերոց յօժարեցան սիրով ստորագրել զհետեւեալ գումարս 'ի դիմաց ժողովրդեան Ս. Եկեղեցեաց Քաղաքիս:

(Տեղի կնքոյ) Մ. Եպիսկոպոս Տէրունեան

ՑՈՒՑԱԿ

Նուիրատուաց ի նպաստ Օրիորդաց Ուսումնարանի շինութեան, Նոր—Զուղայու

1899 Թ. 12 Մարտի

	Ղրանի	Շահի
Բարձր Սրբազան Առաջնորդ Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեան	1,000.—	
Ամենափրկչեան Ս. Վանաց կղերն ընծայուեցաւ պատրաստ առաղձ արժէքով իբր	2,000.—	
Ս. Մինաս Եկեղեցւոյ Սնդիկն	1,000.—	
,, Յովհաննէս Եկեղ. ,,	750.—	
,, Ներսէս ,, ,,	500.—	
,, Լուսաւորիչ և Ս. Գէորգ Եկեղեցեաց Սնդիկն	700.—	
,, Սահմանոս Եկեղեցւոյ Սնդիկն	450.—	
,, Առաքածածնի ,, ,,	400.—	
Գումարն է	6,800.—	

ԴԱՐԼԻՃ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹ

Խաչ. Տէր Մարտիրոս Աւագ Քահանայ Տէր Յովակիմեան	750.—
Տէր Մկրտիչ Պետրոսեան	100.—
Ներսէս Տէր Գ. Ն. Տէր Յարութիւնեանց	40.—
Պօղոս Կարապետ Պօղոսեան	200.—
Սէթ Ե. Յ. Եսայեանց	500.—
Մարիամ Ս. Ե. Յ. Եսայեանց	100.—
Մ. Ս. Պ. Ադանուրեանց	250.—
Թագուհի Ս. Պ. Ադանուրեանց	100.—
Գ. Տէր Յովակիմեանց	100.—
Խաչատուր Ն. Կրեսեանց	20.—
Նիգարք Միքայէլեանց	70.—
Աննա Գ. Ց. Միքայէլեանց	30.—
Տարեալ մուս երեսն	2,260.—

Բերեալ աստ	2,260.—
Կ. Մ. Նահապետեան	100.—
Ծաղիկ Ն. Տէր Գրիգորեան	100.—
Վարդուհի Խ. Յովսէփ	100.—
Մկրտիչ Ս. Յարութիւնեանց	40.—
Եղիայ Մ. Տէր Սարգսեան	50.—
Եղբարք Աղանեանց	120.—
Մինաս Պ. Թադէոս	50.—
Խաչխաթուն Մինաս	10.—
Սոփիայ Պօղոս	20.—
Թրգիայ Պ. Ալէքսանեանց	100.—
Մարիամջան Մարգար Բօղդի	150.—
Սանդուխտ Տէր Սարգիս	100.—
Աննա Ս. Պ. Աղանուրեանց	20.—
Լուիզա Ս. Պ. Աղանուրեանց	10.—
Նիկողայոս Յակոբ Բօղդի	25.—
Մանուկ Բարսեղ և որդիքն	250.—
Սէթ Ա. Յովհաննեսեանց	60.—
Մինաս Ա. Յովհաննեսեանց	50.—
Վարդենի Եղդարեան	50.—
Յարութիւն Եղդարեան	50.—
Պետրոս Յովհաննէս Ակօնեանց	4.—
Ծատուր Աւետիք	10.—
Յովհաննէս Գրիգորեան	5.—
Ուրուղու Գրիգորեան	10.—
Պօղոս Մկրտիչ	5.—
Հայրապետ Յ. Հայրապետեանց	10.—
Շամիր Թ. Կրէտ	10.—
Աննա Շամիր Կրէտ	10.—
Շահբազ Գ. Շահբազեան	10.—
Մարիամխանում Յովակիմ	10.—
Մարկոս Ղուկաս	5.—
Մարիամ Դաւիթ Բօղդի	20.—
Թադուհի Շալխան	2.—
Տիկին Ղ. Ծ. Աղանեանց	10.—
Ս. Բ. Սուքիասեան	10.—
Տարեալ միւս երեսն	3,846.—

Բերեալ աստ	3,846.—
Տիկին Մէրջան Յովհաննէս	50.—
Լուլուն Մովսէս Նահապետեանց	50.—
Քիխա Մկրտիչ Խուդադադեան	20.—
Սաթին Կ. Ծատուր-խանեան	10 —
Մէրխաթուն Յ. Հ. Կրէտեան	100.—
Եղիազար Ա. Գալստանեանց	2.—
Մարգարիտ Կարապետ Մարդարեան	10.—
Աւետիք Սիմէօնեան	5.—
Սուքիաս Աւետիք	4.—
Սարգիս Մինաս Բօղդի	20.—
Թադէոս Եսայեան	5.—
Կոստանդ Դաւիթ	5.—
Ղազար Խ. Գալստանեան	20.—
Յարութիւն Տէր Գրիգորեան	10 —
Եղիայ Յ. Տէր Գրիգորեան	10.—
Ոմն	5.—
Գալստան Հայրապետ Բօղդի	5.—
Յովսէփ Մ. Յովսէփեանց	10.—
Ծաղիկ Յովսէփ Մանուկեան	10.—
Մէհրաբ Մկրտումեան	10.—
Խուդադ Եղիազար	10.—
Գէորգ Կ. Մ. Զօհրապեանց	30.—
Գ. Մ. Զօհրաբ	5.—
Աղանուր Յ. Կարապետ	30.—
Թադուհի Ա. Յ. Կարապետեանց	20.—
Սարբայ Խ Տէր Մկրտչեանց	10.—
Վարդենի Ղուկաս	10.—
Յարութիւն Կիրակոսեան	2.—
Աննայի Յովհաննէս Կիրակոսեանց	5.—
Մարիամխանում Մ. Անդրէասեան	2.—
Գրիգոր Անդրէաս	5.—
Մուրատայ Խաչիկ Մանասէր	2.—
Մարգարիտ Յովհաննէս	1.—
Աւետիք Յովհաննէսեան	5.—
Խաչիկ Մինաս	5.—
Հայկ Ս. Աղանուրեան	40.—
Ոմն	10.—
Տարեալ միւս երեսն	4,399.—

Բերեալ աստ	4,399.—
Աբրահամ Նահապետ Դալատան	10.—
Ստեփաննոս Թ. Կրկտեան	10.—
Դէորդ Խ. Դաւիթ	5.—
Յովսէփ Մէհրաբ	5.—
Մ. Խ. Դաւիթեանց	5.—
Կարապետ Պ. Թադէոսեան	30.—
Դէորդ Կ. Տէր Յովհաննէս	10.—
Յովհաննէս Մկրտչեան	15.—
Մարիամեան Կարապետեան	10.—
Սարգիս Կ. Բարսեղեանց	30.—
Ս. Ս. Նահապետեան	25.—
Լուիզայ Ս. Ս. Նահապետեան	12.—10
Վարդուկ Ա. Բօլդի	12.—10
Խաչատուն Աբրահամ Նահապետ	20.—
Ծաղիկ Տէր Դաւիթ Ս. Նահապետեան	20.—
Նահապետ Եդգար և Ընկերութիւն Պարոն Յ. Եդգարի և Պարոն Մինասի հաշիւ	100.—
Դալատան Յովսէփ	10.—
Յովհաննէս Մկրտիչ Կրէտ	8.—
Ա. Կ. Մ. Զօհրապեանց	30.—
Ամբողջ Գումարն է	4,764.—

ՅԱԿՈՎԲՋԱՆԵՆՑ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Բաղդասար Յ. Աբգարեանց	30.—
Աննայ Բ. Յ. Աբգարեանց	20.—
Նավիրի Ատուածատրեան	10.—
Աւետիք Յարութիւն	10.—
Մուրատայ Ա. Յարութիւն	6.—
Յովհաննէս Ա. Աղէքսանդր	20.—
Յովհաննէս Կարապետեան	1.—
Սարգիս Մարտիրոս Յարութիւնեան	2.—
Մանուկ Ստեփաննոս	2.—
Եղիայ Յովսէփ	5.—
Գրիգոր Եղիայ	3.—
Խաչատուն Կ. Դէորգեանց	10.—
Տարեալ միւս երեսն	119.—

Բերեալ աստ	119.—
Մ. Յ. Ղարախանեան	10.—
Անդրէաս Տէր Եփրեմեան	5.—
Եղիսաբեթ Տէր Մանուէլ	10.—
Կարապետ Աբրահամեան	10.—
Աննայի Աբրահամեան	10.—
Շաքար Կ. Աբրահամեան	5.—
Աւետ Ղազարեան	2.—
Թադուհի Սէթաղայ	1.—
Պետրոս Ընջրղուլեան	10.—
Ս. Վ.	10.—
Եւայ Ղուկասեան	20.—
Մինաս Յ. Յովսէփեանց	30.—
Սանդուխտ Մ. Յ. Յովսէփեանց	5.—
Կարապետ Գէորգ	1.—
Խաչիկ Գրիգոր	2.—
Սամուէլ Նազարէթեան	10.—
Գէորգ Բարսեղ	1.—
Յարութիւն Ս. Վարդանեան	10.—
Դաւլաթիար Յովհաննէսեան	5.—
Վարդենի Թումիկեան	15.—
Վարդենի Տէր Կ. Թումիկեան	5.—
Յովհաննէս Մակար	5.—
Նահապետ Եդգար և Ընկերութիւն Մ. Թ. Մարգարի հաշիւ	50.—
Մկրտիչ Յ. Աշղեան	6.—
Խաչիկ Գ. Այվազեան	5.—
Խաչատուր Թ. Յարութիւնեան	10.—
Ս. Մ. Բարսղեան	6.—
Ամբողջ Գումարն է	378.—

ՔՕՉԷՐ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Մարտիրոս Ս. Տէր Ոսկանեանց	500.—
Թադուհի Ս. Տէր Ոսկանեանց	100.—
Գէորգ Յ. Բօլդի	100.—
Պետրոս Մ. Զառախեան	100.—
Տարեալ միւս երեսն	800.—

Բերեալ աստ	800.—
Կարապետ Տէր Մկրտչեան	60.—
Ց. Դեմետրեան	300.—
Շարլէթ Դեմետրեան	25.—
Մարիամջան Զօհաննէս	50.—
Կ. Տէր Մ. Կարապետեան	50.—
Աւետիք Տէր Մ. Կարապետեան	50.—
Յովհաննէս Մ. Տէր Յովհաննէսեանց	50.—
Կարապետ Մ. Տէր Յովհաննէսեանց	20.—
Հռիփսիմէ Մ. Տէր Յովհաննէսեանց	30.—
Մարիամ Տէր Ց. Գասպարեան և Գրիգոր փեսայն	30.—
Մարիամ Մինաս Զօրաբեան	30.—
Օրիորդ Գուգուլի Մինաս Զօրաբեան	30.—
Յարութիւն Մանուկեան	10.—
Հռիփսիմէ Ց. Տէր Յակոբեան	4.—
Յովհաննէս Գալստան	20.—
Օհան Ադամեան	5.—
Թագուհի Պօղոս Գալստանեան	10.—
Խոսրով Յովհաննէս	20.—
Խանում Յովհաննէս	10.—
Դաւիթ Յորդանանեան	10.—
Ց. Կ. Սարգիս	60.—
Թագուհի Ց. Կ. Սարգիս	40.—
Հռիփսիմէ Ց. Ծատուրեան	10.—
Պօղոս Պետրոսեան	10.—
Կարապետ Յովսէփ Մանուկեան	10.—
Մարիամ Յովսէփ	5.—
Մարտիրոս Պետրոս	10.—
Ուռուփսանայ Պետրոս	5.—
Նիկողայոս Ց. Քամարզառեան	20.—
Մարտիրոս Գալստան	10.—
Մարիամ Զաքարեան	10.—
Ղազար Յովսէփ	10.—
Հայրապետ Դ. Անտոնեան	10.—
Նեբսէս Աստուածատուր	12.—
Գէորգ Մկրտիչ Ա. Տէր Գէորգեան	20.—
Տարեալ միւս երեսն	1,856.—

Բերեալ աստ	1,856.—
Բենիամին	10.—
Մ. Գ.	16.—
Մ. Մ. Գ.	4.—
Մկրտիչ Յովհաննէս	10.—
Կատարինէ Յակոբ Գալստանեան	10.—
Բարէլ Յովսէփեան	10.—
Արամ Աւետիք	6.—
Սանդուխտ Ց. Տէր Ստեփաննոսեան	5.—
Ոմն	10.—
Յարութիւն Զաքարա	15.—
Ոմն	5.—
Կարապետ Թ. Այդինեանց	5.—
Յովհաննէս Շմաւոնի	2.—
Խաչիկ Դաւթեան	5.—
Պօղոս Յարութիւնեան	5.—
Մկրտիչ Ց. Նաջառ	12.—
Մ. Մ. Հայրապետեան	5.—
Զաքարիայ Մ. Միրզախանեան	5.—
Խաթայի Յովհաննէս	2.—
Աղաջան Աթան	2.—
Յովսէփ Յովհաննէս	2.—
Ամբողջ Գումարն է	2,002.—

ՁԱՐՍՈՒ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Վարդխաթուն Ց. Թ. Տէր Օհանեանց	100.—
Սանդուխտ Գէորգ Ղուկաս	50.—
Խաչխաթուն Տէր Բարսեղ	50.—
Մկրտիչ Կ. Դաւիթ	30.—
Գուգուլի Մ. Կ. Դաւիթ	20.—
Մարգարիտ Տէր Մ. Կ. Դաւթեանց	60.—
Սաթին Գէորգ Անտոն	30.—
Մարգարիտ Խաչիկ Ց. Տէր Կարապետեան	40.—
Վարդուհի Տէր Մարգար Կ. Դաւթեան	100.—
Օրիորդ Ծաղիկ Կ. Առաքելեան	5.—
Օրիորդ Աննա Խաչիկ Ց. Տէր Կարապետեան	5.—
Տարեալ միւս երեսն	490.—

Բերեալ աստ	490.—
Վարթուկ Ա. Տէր Աբրահամեան	5.—
Սանդուխտ Խաչատրեան	2.—
Պողոս Ս. Պողոսեանց	10.—
Մարիամ Պողոս Ս. Պողոսեան	[illegible]
Խաչիկ Թադէոս	4.—
Յովհաննէս Մ. Փրեանց	50.—
Կ. Տէր Կ. Տէր Յովհաննեանց	10.—
Գրիգոր Ղևոնդ (Գոլի)	5.—
Սաթին Մարտիրոս	1.—
Մարիամխանում Ղուկաս	2.—
Կարապետ Յովհաննէս Ծատուրեան	50.—
Վարթուկ Կ. Յ. Ծատուրեան	30.—
Գէորգ Կ. Յ. Ծատուրեան	20.—
Մէրջան Մարտիրոս Տէր Սարգսեան	50.—
Ծաղիկ Մ. Մարգարեան	50.—
Մէրխաթուն և Վարդուհի Մ. Մարգարեան	20.—
Յովհաննէս և Ղազարոս Ս. Մ. Սարգիս	30.—
Ոմն	50.—
Մկրտիչ Զ. Մարտիրոսեանց	50.—
Կատարինէ Մ. Զ. Մարտիրոսեան	30.—
Նազարէթ Ղուկաս	20.—
Սարգիս Յովհաննէս	4.—
Եղիազար Մարտիրոս	5.—
Թունի Նիկողայոս	10.—
Բարսեղ Յովսէփ	14.—
Աբրահամ Մարգար	10.—
Աւետիք Մարգար	2.—
Մկրտիչ Պետրոսեան	5.—
Կատարինէ Կ. Ոսկանեան	10.—
Յովհաննէս Միրզախանեան	3.—
Լուլուն Յ. Միրզախանեան	3.—
Հռիփսիմէ Յ. Միրզախանեան	3.—
Ռուբէն Յ. Միրզախանեան	1.—
Մանասէր Մ. Ադէքսանդր	5.—
Թագուհի Ա. Տէր Կարապետեանց	20.—
Աւետիք Տէր Կարապետ Տէր Աբրահամեանց	5.—
Ուրուղու Սարգիս Մարտիրոս	5.—
Տարեալ միւս երեսն	1,094.—

Բերեալ աստ	1,094.—
Յովհաննէս Զ. Մարտիրոս	10.—
Ծերոնի Յ. Միրզախանեանց	10.—
Ղուկաս [illegible]թէոսեան	10.—
Եփրեմ Կ. [illegible]թեանց	15.—
Կարապետ Ստեփաննոս (Ղարագէլ Թաղի)	10.—
Յարութիւն Գէորգեան	10.—
Մարտիրոս Ս. Յարութիւնեանց	70.—
Մէրխաթուն Ս. Մ. Յարութիւնեանց	30.—
Մարիամ Մ. Յարութիւնեանց	20.—
Ի կողմանէ Հանդ. Ուրուղու Յ. Տէր Ղուկասեանց	100.—
Յովհաննէս Տէր Կ. Տէր Յովհաննեանց	40.—
Սիրվարդ Յովհաննէս Տէր Կ. Տէր Յովհաննեանց	20.—
Եղիա Օհան	20.—
Յովակիմ Տէր Անդրէասեան	5.—
Գումարն է	1,464.—

ՄԵԾ ՄԷՅԴԱՆ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Տէր Ռէթէոս Դաւթեան	100.—
Մկրտիչ և Տիկին Դաւիթ-խանեանց	100.—
Մուրասայ Տէր Պ. Հ. Յակոբջանեանց	50.—
Հ. Տէր Պ. Հ. Յակոբջանեանց	50.—
Մարիամխանում Տէր Ա. Գ. Աբգար	150.—
Եղբարք Թ. Աբգարեանց	50.—
Կատարինէ Ա. Ս. Ստեփաննոսեան	100.—
Գրիգոր Ս. Աբգարեանց	50.—
Վարդանէս Գ. Աբգարեանց	30.—
Մարիամջան Մ. Աբգարեանց	50.—
Մարտիրոս և Նանաջան Խ. Տէր Մարտիրոսեան	50.—
Յովսէփ Կարապետ Յակոբեանց	50.—
Սարգիս Դաւթ-խանեանց	100.—
Տիկին Սարգիս Դաւիթ-խանեանց	100.—
Մարգար Կ. Տէր Յ. Գալստանեան	80.—
Կատարինէ Կ. Տէր Յ. Գալստանեան	20.—
Աւետիք Բարսեղ ընծայեց պատրաստ ա-տաղձ արժէքով իբր	40.—
Աւետիք Դաւիթ Մանուկեան	50.—
Տարեալ միւս երեսն	1,220.—

Բերեալ աստ	1,220.—
Մի մարդ	20.—
Գէորգ Խ. Մանուկեան և Տիկին իւր	60.—
Ս. Յ. Տէր Ստեփանեանց	30.—
Մարգարիտ Ա. Յովսէփեան	5.—
Սարգիս Գ. Աբրահամ	10.—
Մարիամ Տէր Ներսէս Յորդանանեան	10.—
Վարթուկ Ս. Դաւիթ Աբրահամեան	5.—
Յովհաննէս Կ. Տէր Յովհաննսեանց	10.—
Թադէոս Ն. Տէր Գալստանեանց	10.—
Ծաղիկ Թ. Ն. Տէր Գալստանեանց	5.—
Կարապետ Թարվէրդեան	10.—
Մկրտում Յ. Աբգարեանց	30.—
Վէլիջան	10.—
Մարիամ Գ. Գաբրիէլեան	10.—
Սարգիս Մարտիրոսեան	5.—
Մարիամջան Յ. Մ. Աբգարեանց	10.—
Մինաս Յակոբ Յովհաննէս	10.—
Օրդանան Մարգար	10.—
Ստեփաննոս Դաւիթ Աբրահամ	6.—
Մէլքում Յ. Աբգարեանց	10.—
Մարիամ Մէլքում Յ. Աբգարեանց	5.—
Թուխիկ Մանասէր	2.—
Հռիփսիմէ Հ. Դաւթեան	2.—
Ծատուր Կ. Աբգարեանց	10.—
Ամբողջ Գումարն է	1,515.—

ՓՈՔՐ ՄԷՅԴԱՆ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹ

Խաչ. Տէր Սեղբեստրոս Քահանայ Յովհաննէսեան	100.—
Սայի Քահանայ Տէր Ս. Յովհաննսեան	100.—
Գրիգոր Տէր Պօղոսեան	30.—
Ի տեղի Բ. Արզումանեանցին Ն. Արզումանեանց	200.—
Շափէրի Աւետիք Դաւթեանց	50.—
Նանաջան Եղիայ Աւետքեան	50.—
Վարթուկ Գէորգեան	80.—
Սաթին Գրիգորեան	20.—
Մէրջան Տէր Մաշտոց	50.—
Տարեալ միւս երեսն	680.—

Բերեալ աստ	680.—
Յովսէփ Սարգիս	5.—
Թադէոս Այվազ	40.—
Մարգարիտ Թադէոսեան	10.—
Յովսէփ Դաւթեան	10.—
Պետրոս Մարգարեան	5.—
Գէորգ Մարգարեան	5.—
Ծաղիկ Պետրոսեան	5.—
Աննա Գէորգեան	5.—
Տիգրան Դումանեան	20.—
Վարդենի Յարութիւնեան	10.—
Մարիամ Միրզա Գրիգորեանց և որդիքն	30.—
Խաչիկ Մարտիրոս	10.—
Յորդանան Մ. Մկրտումեան	25.—
Յովհաննէս Մ. Մկրտումեան	25.—
Մարիամխանում Յովհաննսեան	25.—
Սաթին Յորդանանեան	25.—
Յարութիւն Ամիրխանեան	10.—
Ոմն	30.—
Շամիր Ստեփաննոսեան	5.—
Եղիսէ Կարապետեան	2.—
Գաբրիէլ Մկրտչեան	5.—
Սարգիս Ասատուր	3.—
Կարապետ Յովսէփեանց	4.—
Գէորգ Յարութիւն	10.—
Սահակ Կարապետեան	10.—
Սարգիս Ա. Տէր Մարտիրոսեանց	4.—
Սիմէոն Աւետիք	2.—
Խաչխաթուն Սարգսեան	2.—
Մարիամ Յարութիւն	2.—
Ամբողջ Գումարն է	1,024.—

ԵՐԵՒԱՆ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹ

Թադուհի Տէր Կ. Յորդանանեանց	50.—
Խաթայի Յ. Տէր Կ. Յորդանանեանց	50.—
Յարութիւն Տէր Կ. Յորդանանեանց	50.—
Ցանայի Տէր Դասպար	100.—
Տարեալ միւս երեսն	250.—

Բերեալ աստ	250.—
Գրիգոր Ա. Տէր Խաչատրեան	15.—
Մովսէս Ա. Տէր Խաչատրեան	10.—
Վարպենի Վ. Տէր Գէորգեանց	10.—
Մովսէս Խ. Թադէոսեանց	10.—
Ստեփաննոս Ղազարեան	15.—
Պետրոս Ստեփաննոսեան (հիւսն) մի զոյգ փոքրիկ դարվազայ արժէքով իբր	50.—
ՄարիամՋան Կարապետեան (այրի-աղքատ)	3.—
Մարգար (գիւղացի)	,, —10
Աննայի Ց. Զէյթունեանց	10.—
Ստեփաննոս Մինաս	10.—
Բալասան Ս. Գաբրիէլեան	5.—
Էլիզ Ս. Սամբսոնեան	3.—
Վաղարշակ Գ. Թումիկեան	10.—
Մեսրովբ Նսայեան	5.—
Կարապետ Օ. Յովհաննէսեան	6.—
Յովակիմ Ղազիխանեան	5.—
Ա. Տէր Գասպար	19.—19
Մկրտիչ Էնգիբէգեան	6.—
Աննա Յովսէփեան	5.—
Մատթէոս Գրիգորեան	5.—
Բարսեղ Յովհաննոսեան	20.—
Ծաղիկ Մինաս Յակոբեան	10.—
Յովսէփ Պետրոսեան	4.—
Պօղոս Մարութեան	2.—
Գրիգոր Ոսկանեան	2.—
Գրիգոր Մանասէրեան	2.—
Մեսքիսեդեկ Տէր Մինաս	80.—
Յովհաննէս Մկրտչեան	5.—
Գուգուլի Սարգսեան	20.—
Մարիամ Ա. Վարդանեան	4.—
Կատարինէ Հայրապետեան	5.—
Վառվառ Յակոբեան	4.—
Մարտիրոս Սարգսեան	4.—
Թադէոս Սարգսեան	10.—
Սարգիս Թադէոսեան	10.—
Տարեալ միւս երեսն	635.— 9

Բերեալ աստ	635.— 9
Բաղդասար Մէլքումեան	10.—
Կատարինէ Գէորգեան	1.—
Թարվերդի Ղ. Թորոսի	5.—
Բէյլիս Աւդալ Ղուկասեան (Խոյդեանցի)	50.—
Նարինջ-խան Ղուկասեան ,,	10.—
Ամբողջ Գումարն է	711.— 9

ՂԵՐԱԳԵԼ ԹԱՂԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՊ

Ոմն	50.—
Մարիամ Մէգանեան	50.—
Ց. Բամբանեանց	50.—
Խաչատուր Ցարութիւն և Տիկինն	15.—
Թադուհի Ա. Տէր Կարապետ Տէր Աւետեան	5.—
Ստեփաննոս Յովակիմեան	10.—
Մէրջան Ն. Տէր Կարապետ Տէր Աւետեան	10.—
Խաթուն Սարգսեան	3.—
Կարապետ Ստեփաննոսեան	10.—
Միքայէլ Դաւիթ Ակօնեանց	5.—
Բալասան Գէորգ Հայրապետեան	2.—
Ամբողջ Գումարն է	210.—

Ազգ. Կեդր. Ուսումնարանի աշակերտներից	111.—17
Ազգ. Օր. Ուսումնարանի աշակերտուհիներից	121.— 3
Գումարն է	233.— 1

Համագումարն է տասն և ինն հազար մի հարիւր և մի դրանի և տասն շահի . 19,101.—10

Որոտագրուած է Հանգանակութեան Ժապաւէնեալ Տումարից, որ ի Նպաստ Նոր կառուցանելի օրիորդական Ուսումնարանին։ Ինձ է յանձնուած վերնշանակեալ գումարի ամբողջութիւնն իբրև Գանձապահի՝ որից գործածութեան եմ տալիս պէտք եղած քանակութեամբ հարկաւոր պարագաներում օրինական ձևակերպութեամբ։

Գանձապահ Ազգ. երկսեռ. Ուսումնարանաց և Նոր շինուելիք Օրիորդ. Ուսումնարանի Յանձնաժողովոյ՝ Հ. Տէր Պ. Հ. Յակոբջանեանց։

ՎԵՐՋԱԲԱՆ

ՄԻ ՀԱՅՏՆԱՅԻՐ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

Նոր—Ջուղայի արդի Հայ ազգային երկսեռ Ուսումնարանաց Հոգաբարձութիւնը՝ որ բաղկացած է երիտասարդ ոյժերից, յորմէհետէ Ս. Առաջնորդը ժամանել է իւր Գահը կարգուստ դաստիարակութեան Հայկազն մանկտւոյն հնարաւոր եղածին չափ ճիգն ու ջան չի խնայում, որպէս ցոյց տրուեցաւ։ Նոր—Ջուղայի Հայեր, որ զօրաւոր մրցակից ունին թէ փողով և թէ ամեն նիւթական միջոցներով Բողոքականները՝ ձեռնհաս պաշտօնէութեան կողմից եթէ անուշադիր մնայ կրթական հարցը, նոքա այս դէպքում վերայ են հասնում մեր պղտոր ջրից ձուկն որսալու, նոքա որ ամեն ժամին ու ամեն բոլէին պատրաստ են մեր բարոյական չահերի դէմ մեղանչել անխղճօրէն, նոքա որ միշտ և ամենուրեք ուր Հայ կայ խափանարար դեր են կատարել Ազգ. յառաջադիմութեան գործին, ահա մի պարզ օրինակ. այստեղ հակառակ Պատ. Հոգաբարձու—Ուսուցչական մարմնի աչալուրջ հսկողութեան հնարաւորութիւն չ'կայ բաղձալի չափով Դիսցիպլինայի գծերով մի ընթացք տալ Ազգ. երկսեռ Ուսումնարանաց։ Ինչո՞ւ։ Որովհետև Բողոքականաց Ուսումնարանը պատրաստ է գրկաբաց ընդունելու մեր Դըպրոցից մի փոքր վշտացած աշակերտին որ թէպէտև համեմատած մերոնց հետ շատ էլ ստոր աստիճանի վերայ կանգնած լինի այն իւր բարոյական կամ նեղքին կազմութեամբ. բաւական է որ մեր Ուսումնարաններում որ և իցէ մի աշակերտի քմահաճոյքները չափաւորելու միջոցներ գործադրուին Վարչութեան կողմից, կը տեսնէք որ նա իւր ծնողաց միամիտ հաւանութեամբ կը թողու իւր Ազգ. Վարժարանը և Բողոքականաց Ուսումնարան անուն ննջարանի դուռը կը բաղխէ, գնում է այնտեղ այսպէս ասած Բոստ նստելու (Պարսկաստանում ոճրագործներն իրենց ոճիրը գործելուց յետոյ փախչելով ապաստանում են ուխտատեղիներում, ազօթատներում և կամ սրբութեան համբաւ վայելող անձանց յարկերի տակում, այս է Բոստ նստել)։ Նէ ինչ էք կարծում, նոքա սրտի ուրախութեամբ են ընդունում դրացու Դպրոցական օրէնքին դէմ ընդվզող անսաստ չարաճճուն և կարելի է ասել՝ որ դեռ քաջալերում են նրան իւր պակասութիւնների մէջ՝ պարսաւելով Ազգ. Վարժարանը։ Նոքա իրանց աշակերտներին խաբում են գեղեցիկ նկարներով, այլն այլ պարգևներով՝ որոնցով փոքրիկների աչքերը չլանում են... սակայն մենք այդ չ'ունինք, ինչ անենք. մեղաւոր ենք, ուշիմ ընթերցողն այս 'ի նկատի առնելով կարող է տգեղ և վնասաբեր մանրամասնութեանց մէջ թափանցել և ցաւ 'ի սիրտ ականատես լինել այն բարոյական անկման և լաւ նկարագրի ոչնչացմանը, որ յառաջանում է այս տնաւեր ընթացքից։ Փորձուած խօսք է սա արդարև՝ «Աստուած ում որ կամենում է պատժել առաջ խելքն է առնում», եթէ չ'ենք կամենում որ Աստուած մեզ պատժի՝ ունենանք խելք ուրեմն՝ հաստատ համոզուելով, որ փրկութիւնը թէ հոգուն և թէ մարմնին՝ խելքից է կախուած։ Պէտք է խելքով կռուիլ թէ հոգու և թէ մարմնի թշնամիների հետ միանգամայն, խելքն է դարուս քաղաքակիրթ ազգերի զէնքը, որով երկիրներ են նուաճում առանց վառօդի։ Բողոքական՝ վաղուց 'ի վեր է, որ իւր յատուկ սկզբունքով այսպանում է Հայկական եկեղեցու սրբութիւնները՝ անդոսնում է Հայ ժողովրդի կրօնական սուրբ զգացումները և այլն. և իրաւունք ունի, որովհետև նա հետևում է իւր սկզբունքին, Հայն խելք թող ունենայ նրա ծուղակով չ'բռնուելու, և որ ամենից աւելի ողբալին է թող օտարի ձեռքում բրիչ չ'դառնայ իւր ազգի տունը քանդելու։ —Այն ինչ տեսարան ընդ մամլով էր՝ Բարեջան Առաջնորդի հրամանաւ ձեռնարկուեց Ս. Ամենափրկչեան Վանուց չրջապարսպից ներս տաճարին հարաւ-արևմտեան կողմն եղող հին չինութիւնների նորոգութեան, որ պէտք է ծառայէ իբրև «Հաղոր Դպրանոց» ժամանակաւորապէս մինչև որ նիւթական միջոցներ ներեն լաւագոյնն ունենալ և աւելի ընդարձակել։ Առաջնորդ Հայրն իւր յոյսը միայն ճշմարիտ Հայ ազգասէրների և սրտով իրենց ազգին յառաջադիմութեան և ուղիղ դաստիարակութեան ցանկացողների նիւթական և բարոյական օժանդակութեան վերայ դնելով է, որ վստահօրէն ձեռնամուխ եղաւ այս նոր ուսումնական հաստատութեան չինութեան

գործին։ Սիրելի է յուսալ և սպասել մեր սիրելի ազգայնոց աջակցութեան, որ կը բարեհաճին Պարսկական երկրի այս խորքում Հայկական պլպլուն կանդեղի մէջ մի մի կաթիլ իւղ ածել վառ պահելու համար զայն, կենդանի լոյս սփռելով սոյն փոքրաթիւ համայնքին վերայ, և այսպէս ազատել նրանց օտարին ծաղր ու ծանակ լինելու անպատուաբեր դրութիւնից։ Ի սրտէ յաջողութիւն մաղթենք գործին գլուխ գալուն, որը կը լինի Նոր—Զուղայի Հայոց կրթական վիճակին մի անմահ արձան՝ նոցա բարոյական սեմին վերայ կանգնած, և որին նայելով միացեալ ոյժերով կարենան նոքա կրթութեամբ դիմադրել օտար քրիստոնեայ կոչուածների ամեն դայթակղական ոտնձգութիւններին, որք սպառնում են Հայոց Եկեղեցական կրօնական ու բարոյական չինութեանց միանգամայն։

Խմբագրեց Դպիր Մկրտիչ Երկարակեցեան։

ԹՈՂԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ
ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ
ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

ՀՄՄ Հայագիտական գրադարան
MAL009287